50. ՉԻԼ ՈՒ ՔԵՈՍԵ

Ժամանակին մեկ աղքատ կըլլի. ըս աղքատը պարտքը շատ կունենա, պարտկնտիրանը կըսեն թե. - Մեր պարտկը տուր:

Պարտկը չի կրնր տար, ի՞նչ դուր կինե: Մեկ հարուստ մարդ մի ըս պարտկնտիրանը ըսըց. - Աղբեար, էսորմե ի՞նչ կուզիս, պարտկը չի կրնըր տար, մե քիչ համբերեցեք:

Էսոք մտիկ չեն ինիր, կռիվ կինին պարտուց համար, ըս հերիֆին կը զինին, եարալի կինին: Ըս զենկին մարդն էլ, պարտկնտիրաննուն կը կանչե. էնոց փարանին կուտա, կը ճանփե:

Ըս աղքատը եարալու էրած էին, քիչմ՝ ալ ապրեցավ, մեռավ: Ձենկին մարդը առոք-պառոք աղքատին հողը գերեզման ըրըց: Իրան էալ տղա մի կա. տղին կըսե. - Ա՛յ օղուլ, գնա Ֆրենկիստանու ինձի բան-ճոթ առ, էկո: Առավոտը գնա, մարդ մի առ էկո, հետդ դնեմ, որ ճանփնին քիզի պեյե, էան մարդու աչքը չիլ, մորուքը քեոսե չըլլի, ինչ կըլլի թող ըլլի:

Տղեն իրեք օր կօլրտի, աչքը կապուտ, մորուքը քոսա ըռաստ գուգա, ուրիշ մարդ չի կրնըր գտներ. մեկ աչքը չիլ, մորուքը քոսա մի առավ էկավ իրան հոր:

- Ես քիզի ըսի, թե էաս դուր մարդ մի՛ բերեր, այ որդի՛, էաս դուր մարդե զարար կը տեսնս:

- Ուրիշ մարդ չգտա, հայրի՛կ, ըսի բերի:

- Բերիր նե բերիր, ի՞նչ ինիմ, թող ըսի ըլլի:

Ըդ մարդուն ըսըց. - Որդի՛, իմ տղաս սաղլամ տի տանիս, սաղլամ տի բերես, ի՞նչ ղտի փարա ուզիս՝ կուտամ, թեքի տղիս վնաս մի չգա:

Պատրաստ տեսավ օր առավոտը էլլան:

- Ըպա իմ ընկերտանքը ամիս մի առաջ է գընցած, էալ չեք հասնիր էնոց, միր ըս խզմեթքեարը եաեա՞ն տի գա:

- Դու քո ձինը հեծիր, ըն էլ իմ ձինը թող հեծնա:

Էլան ընկան ճանփա, տասնվերկու սահաթ տեղ գընցին, աղբրի մը վրա էջան, նըստան, հաց կերան, ջուր խմեցին, չիպխնին լեցոցին:

Ըդ Քեոսեն տղային ըսըց. - Բան տի ըսիմ ինը. չի լեղանաս:

- Ինչո՞ւ տի լեղանամ, չիմ լեղանար, ըսե:

- Իմ ըսելս ընի է օր, քիզի մոտիկ ճանփովը կը տանիմ. մեք էրթըք, առնիք դառնաք, էնոք տահա քաղաքը հասած չին:

- Ես ըդ սարեն չիմ իգար, իմ պապ նաղլը կիներ, թե ըդ սարովը մոտիկ է, հըմա, աժդահար ու դև կա, դգա չիմ էրթըր, ճընճուղը թևովը, օձը պորտովը ըս սարեն չէրթըր:

Ծառան հերսոտավ, թուրը քաշեց, ըսըց. - Տի մորթիմ:

Տղան ըսըց. - Փարան քու քովն է, ինձիս ինչո՞ւ կը պանես:

- Ես տե իմա քու ծառան էի, սկու իդեն էլ դու իմ ծառան կըլլիս, չէ նե՝ կը մորթիմ քիզի:

- Ինձիս մի պանիր, սկու իդեն ես ծառա կըլլիմ:

Էլան հեծան ձիանը, տասվերկու սահաթ քշեցին, էլան սարին գլոխը, էրկու սահաթ քշեցին, էջան մեկ ձորու մի մեջ, ըդտեղ քիչ մի տեղ դեոր է, հոն էալ արտ մի կա, մուքը վրա առավ, էջան ըդ արտին մեջ, արտն ալ ծմերուկ է էրած: Արտին օրթըլըխ տեղը էջան:

Տղան ըսըց. - Ես գիտիմ, իմ գլխուն ինչ փորձանք տի բերես, բերիր ըս ծմերկան մեջ օր, ըսօր տեր կա, գա մեզ մորթե:

- Ես չըսի թե քու տղան իմ, ձեան չի պտի տաս:

- Ճանըմ, ես խալթմ՝ էր էրի, էալ սկուիդեն ձեան չիմ տար, ինչ կինիս՝ էրե:

Տղին քունը վախուն տարավ: Ծառան բերեց ապան ձգեց ըդ տղի վրան օր չի մսի: Տղան արթըցավ:

Քեոսեն ըսըց. - Սոված ի՞ս:

- Ծարավ իմ, - ըսըց:

Քեոսեն բերեց մենծ ծմերուկ մի կըյրեց, մեջը հանեց:

- Դե, ըդի կեր, - ըսըց, - որ էրթըմ ջուր բերեմ:

Գնըց ջուր բերեց, տղան ըսըց. - Ինչո՞ւ բերիր, ծմերուկը կերա, ծարվուքինս անցավ:

Պարկավ տղան, էաս Քեոսեն քաշեց թուրը, ընկավ ծմերուկի պոստանի մեջ, փրթեց, մայրեց, լցեց ձիանուն առաջ, բերդ ըրըց, էկավ քարը

բարձ ըրեց, չուպուխը լեցոց, խմեց:

Ձիանը հրռհրռացին: Լուսնալու էր, պոստընին խզմեթծին էկավ, հայավ օր էրկու ծին կա, մի մարդ չուպուխ կը խմե, ետ օլրտավ, գնը խապար տվեց թե. մեր պոստանին մեջ էրկու ծին կա՝ մի մարդ, պոստանը վերան ըրած ին, թալանած:

Ըս պոստանը քառսուն դևի պոստան էր:

Արև ցաթեց, դևերուն մենծը ըսեց. - Ադբրտանք, իսկի օձը պորտովը, ճնճուղը թևովը ըս մեր պոստանը չէր իգար, մեկդ գընցեք՝ ադ շատ կըրիճ մարդ է օր էկեր՝ մեր պոստանի մեջ տեղ նստեր է, ինչ էրեր է, էրեր է, գնա ըսա, թող էլլե, էրթա:

Մեկը էկավ. - Աղբեար, մեր մենծը ըսը՝ էլի գնա:

Քեոսեն էլավ էսոր թևը կըրեց:

Դևերը հայան օր չգար, մենծը ուրիշին ըսեց. - Գընցեք մեկդ, ինչո՞ւ չգար, խապար մի բերեք, էրկու ծին խայվալթու ըրեց. մեզի փայ չի բերեց:

Մեկն էալ էկավ. - Աղբեա՛ր, դու ի՞նչ մարդ իս, էլիր, գնա, խաթաղ մեր միներ հեռընցուր:

Քեոսեն էլավ, թուրը քաշեց, ըդուր գլոխն էալ կըրեց, էլավ գնը հերսեն էն թևը կըրածի գլոխն էլ կըրեց, էնոր վրա ցգեց:

Մնացողները՝ քուլլի էկան, չևերմիշ էրին Քեոսեն, Քեոսեն ամենկուն թուր մի կը զիներ, քառսունին գլոխն էլ կըրեց: Իրան տղան տահա խապար չունի, քնուկ է:

Քեոսեն ձիանը տարավ ջրել. տղան քնած տեղեն արթընցավ, տեսավ քառսուն հատ լեշ իրարու վրա, վախցավ՝ էաս ի՞նչ բան է. Քեոսեն էալ՝ ձիան էալ հոս չեն:

Սառավ, պաղավ մնը. «Ձիս ալ ատանկ տի ինին»:

Քեոսեն էկավ օր տղին հալ չկա:

- Այ որդի՛, մի՛ վախիր, ես քովդ իմ, ես սաղ իմ:

Էլավ հեծոց՝ ընկան ճանփա, գընցին Մասիսու պես լեառան մի էկան ղայանմիշ էղան ըդ լեառան օր լեռն ի վեր տի էլնեն, տի պատենան, մի կյուլլի մենզիլ մնը օր պատենեն, ձիաննուն ի վար էջան. Քեոսեն ըսը. - Այ որդի՛, ձիանուն մուղայեթ կեցիր, ես էլլեմ լեառան գլոխը, գամ, տեսնը հալա ճանփա կա օր պատենաք:

Գնը ածդահար մի տեսավ, ածդահարը կլոկվեր է, քակվեցավ, դեպի Քեոսեն էկավ, Քեոսեն եան տվեց, մեկ թուր մի նետեց չըլլոցը կըրեց բերեց էսոր գլոխը քարով ջխջխեց. գլխուն ծուծերը առավ: Ըս տեղեն էլան, գընցին քաղաքը հասան: Քեոսեն տարավ ձիանը կապեց խանը: Ման էկավ օր տահա ընկերտանքը չեն էկած. շիտակ գնը շուշեճու քով, եոթ-

ուբ-տաս հատ շուշե առավ, պղինձմ՝ էալ առավ, գնը էրկու շալակ էալ փեատ բերեց. ծուծը լցեց պղինձի մեջը. պաշլայեց կրակը վառիլը, էփեց. եոթեն մե մի կայնեցոց, լցեց շուշենուն մեջ, տվեց տղին շալակը:

- Սոխաղներ կէրթս, կոլրտիս թե՝ ես հեքիմ իմ:

Տղան ըսը, թե. - Ես հեքիմութին չիմ գիտեր:

- Օր հարցուցին, թե հեքի՞մ իս, ըսա՝ հեքիմի չրաղ իմ:

Տղան էլավ գընը: «Հեքիմ իմ, հեքիմ իմ», - պաշլայեց, կանչեց:

Թագավորին խապար տվին, թե հեքիմ է էկեր:

Թագավորը մարդ ճանփեց, թե՝ գընցեք բերեք:

Գընցին բերին թագավորի կուշտը:

Թագավորը ըսը. - Դու հեքի՞մ իս:

- Ես չրաղ իմ, վարպետ ունիմ:

- Դե գնա, վարպետդ առ էկո, որդի՛:

Էկավ, վարպետը առավ գնը, թագավորին դեմը կայնավ:

- Դու ի՞նչ հեքիմ իս:

- Ես աշխարքը ինչ հեքիմութին ըսես նե՝ գիտեմ:

- Օր հեքիմութին գիտիս, ինձի աղջիկ մի կա, եարայոտ փարայոտ է, կրնը՞ս սաղցընես. ըն մի աղջիկ է, էալ բան չունիմ:

- Աղջիկը օր սաղցընիմ, ինձի ի՞նչ կուտաս:

- Քիզի օսկի կուտամ:

- Ես օսկին չիմ ուզեր, ես օր սաղցուցի, աղջիկդ կուզիմ իմ տղին, ըսի իմ տղան է, կուտաս նը՝ կը սաղցընիմ:

- է, հայտե, այտըս այտ թող ըլլի, օր սաղցուցիր աղջիկս, կուտամ, աշխարհը օլրտա, չկրցա հեքիմ գտնայի օր աղջիկս սաղցըներ, դու օր սաղցուցիր, կուտամ:

- Աղջիկդ տի տաս, հա՛, դը՛, ինձիս օդա մի տուր:

Աղջիկը բերին հեքիմի քով, առավ մտավ օդան: Չըլպըխցոց ու դեղերը քսեց վրան, քսան ու չորս սահաթ մընը. թագավորին ըսը, թե՝ համամ հազր էրե: Թագավորը հազր ըրը: Հեքիմը առավ գնը համամ, լգցոց, դեղը հեմըլ քսեց. հեմըլ լոգցոց: Աղջկան եարանին սաղցավ, թագավորը էկավ, տեսավ իրան աղջկան, օր սըփ սաղ էղեր է. ամա պենկզը չկա էրեսին. վեզիրնը, նազիրը ըսին թե. - Թագավոր ապրած կենա, շատ լավ է սաղցուցեր:

Հեքիմը թագավորին ըսը. - Աղջիկդ սաղցուցի, խոստացիր օր տաս, տուր, նշան տի դնիմ:

- Ես թագավոր իմ, խոսացս ետ չիմ դառնար:

Նշան դրին:

- Հեքիմպաշի, շատ լավ սաղցուցիր, ամա պենկզը տեղը չէ:

- Ինչո՞ւդ պետք է, թագավո՛ր ապրած կենա, իմ ղապուլս է:

- Ես թագավոր իմ, օրը հինգ անգամ աղջիկս տի տեսնիմ:

- Պենկզը ինչո՞ւդ պետք է, էնի սորա իմ բանն է:

Հեքիմը կը վախնար օր պենկզը տեղը գար, խոսածութենե ետ դառնար թագավորը, էնոր համար չէր սաղցըներ:

Եոթը օր, եոթը գիշեր հեարսնիք էրին. տղան կարգեցին, զատ օդա մի տվին հեքիմի օդայի քով, աղջիկնը տղան տարին մեկտեղեցին: Քեոսեն ըսըց. - Այ որդի՛, գնա քովը, չըլլի օր ամչնաս քի, էնի թագավորի աղջիկ է, ես քովդ իմ:

Տղան գնըց ներս աղջկան քով. Քեոսեն տղի հետ մտավ ներս, ամա տղին, աղջիկան չէրևար: Գիր գիտեր, ղըլսմ ուներ, աներևոյթքի պես մարդու չէրևար: Քեոսեն թուրը քաշեց, կայնավ աղջկա քով, տղան օր գնըց՝ աղջկան տի մոտենա, աղջկան բերնեն օձ մի էլավ օր տղին խեթե: Քեոսեն չէր էրևար, թուր մի զարկեց օձուն գլխուն, կըրեց, աղջկան բերնեն քաշեց հանեց, ձգեց գետինը, տղան տեսավ օձը, վախցավ, աղջիկն էալ վախցավ: Քեոսեն էլավ դուռը, բանլին քովն էր, բացեց դուռը, տղան ճանփեց իրան օդան. էկավ աղջկան քով՝ «Հա՛րս, մի՛ վախնար, ես քեզ կը սաղցնիմ»: Մեկալ իրիկուն ավլա ճանփեց, ավլա Քեոսեն գընըց, ավլա զարկեց օձուն. էրկուքը խալսցոց, մեկը մախսուզ թողեց փորուն մեջ: Ամիս մը կեցավ, թագավորը տեսավ օր աղջիկը լավ վրա է էկեր, հըմա հիլլե տահա կա:

Քեոսեն էլավ, խնդրվավ. - Հարսըս տի առնիմ, երկիր էրթըմ:

Թագավորը ըսըց. - Ճանըմ, մէրթըր, ես թագավոր մ'իմ, աղջիկս աչքիս առաջ մնը:

- Պտի էրթըմ:

Թագավորը ճանփու դրեց, աղջիկն ու փեսան մնաս բարով ըսին թագավորին, ընկան ճանփա, գընցին: Շատ գընցին, քիչ գընցին, միայն Աստված գինա, ինչ ղտիկ գընցին: Գընցին, խապար ճանփեցին տղի հոր թե՝ աչքդ լոս, տղադ գուգա:

Հասան էսոք իրանց գեղի քով գերեզմանները, աղջիկը էջոցին ծիան ի վար գետինը:

- Աղա՛, - ըսըց, - տե իմա ես քիզի ադայութին կինեի, հիմա քու խըզմեթքեարդ իմ. ամեն մալը քիզի. քու մենե փարա էլ չառնիմ, ըմը աղջիկը տի կիսիմ:

Աղջիկը զարմացավ, թե՝ ինդուր տի կիսին ինձիս:

Քեոսեն ըսըց. «Սնամիշ էնիմ թե տեսնիմ, ի՞նչ կըսե տղան»:

Տղան ըսըց. - Կիսե, հայրիկ, դու գիտես, կամքը քումն է, դու օր ինծիս տարիր, բերիր, ըս աղեկութինը էրիր, ի՞նչ դուր կուզես, էրե:

Քեոսեն թուրը քաշեց, տի զինե աղջկան. աղջիկն օր վախցավ, օձն էլավ աղջկան փորեն:

Քեոսեն ըսըց. - Աղջիկս, էալ քիզի գնա քու տունը, ես էալ կէրթըմ իմ տունը:

Տղան ըսըց, թե. - Քու տունդ վե՞ր մի է:

Գերեզմանը ցույց տվեց, թե. «Իմ տունը ըսի է», ու կորավ:

Տղան մալը առավ, գնըց պապուն տունը, պապը մալը տեղավորեց, էկավ նստավ տղին քով:

- Ո՞ւր է, որդի, ըն Քեոսեն:

- Գնըց իր տունը:

- Ինք իր տունը տեսե՞ր իս, վե՞ր տեղն է:

- Տեսա:

- Օր կըսես «շատ լավ մարդ է», պետք չէր օ գար ու էտև ես իզին տայի՝ էրթըր, լավ չէ ըրեր օր ինքը իր գլխուն գըցեր է:

- Հայրիկ, էրթանք, էնոր տունը սալխցընեմ:

Էլան գըցին, ըն գերեզմանին վրան կայնան:

Պապը ըսըց. - Ըսի ի՞նչ է:

- Ընի օր բռնեցի, ըսըց, թե՝ «Ըսի է իմ տունը», մտավ ըս գերեզմանի մեջ, դայպ էղավ:

- Ըդ մարդ օր պարտկը տվաք, ըն մարդու գերեզմանն է:

Պապը քարին վրա հայավ, թարիխ զարկեր է. «էն մարդ օր հող ու գերեզման էրի, էնոր գերեզմանն է». ըն մարդը մեռած է, ընդո՞ւր քիզի տարավ, բերավ, այ որդի՛:

Կէլլեն զուգան տուն պապ ու տղա, գիշերը ըդ տղի պապը կերծվի: Քեոսեն կէրևա, կըսը. - Ինչո՞ւ զարմանք կը մնըս, քու աղեկութին շատ է իմ վրա:

Մարդը արթըցավ, զարմանք մնըց՝ աճապ էսի իրա՞վ է:

Էլավ ինչ օր ուներ, կեսը տղին բաժին հանեց, կեսն էլ էդ հերիֆին համար աղքատաց տվեց:

Էրկնուց...